

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ԽՐԱԳՐԱՊԵՏ - ՏԵՕՐԷՆ

Ղ. ԲՈՒՍՏ

Գ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 54

1899 ԱՊՐԻԼ 3

Ամեն տեղի համար Տարեկան կանխիկ **50** դահեկան, վեցամսեայ **26**, իսկ եռամսեայ, **13** դահեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ **15** ֆրանկ: Թղթատարի ծախքը համագրութեան կը վերաբերի: Հասը **40** փարայ: Գաւառներէ բօսքի բուլ ալ կ'ընդունուի **100** դրուժի տեղ **105** դրուժ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մինքն Ուղարկեալ. — Կտակի մը առթիւ:
Ս. Մ. Գաւառեան. — Սկզբունք Նարադրութեան:
Թ. Սինանեան. — Երկրագործական թիւերէն երու հիւանդութիւն մը: Արմատանեի:
Ղ. Բուր. — Այգեբանական: Կոնքեղ եւ սեւանեի:
Ղ. Բուր. — Ճարտարարուեստական: Ներկարարութիւն:
Տ. Պօլաճեան. — Գամաղի:
Ղ. Բուր. — Մեքենախօսական:
Արտ. — Առանիւն Տնտեսական:
Տանդիլի. — Խոհանոցի Բաժին:
Հանրագիտակի Զեկոյց:
Թերթան. — Ուղեւորութիւն երկրիս կեդրոնը:
Թղթակցութիւն, Ազդեալը:

Հասը 40 փարայ

ՏՊԱԳՐ. ԳՐԻԳՈՐ Պ. ԳԱՏՍԵՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապ - Արի ճատտեան, Թիւ 44

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ, Ի Բ. ԾՐՋԱՆԸ

Ամբողջ հաւաքածոն՝ թիւ 1էն թիւ 52, կը ծախուի մէկ օտմ. ոսկի. իսկ իւրաքանչիւր անջատ թերթ 5 դահեկան:

Հանրագիտակի Բ. Տարեշրջանի մէջ կարգ մը անձնաւորութեանց թերթ զըրկած ենք, իրենց բաժնեգինը վճարած չըլլալուն համար, ժամանակ մը վերջը դադրեցուցած ենք թերթերու առաքումը: Արդ՝ կը խնդրուի մեր Պատ. Գործակալներէն, որ բարեհաճին իրենց շրջանակին մէջ գտնուած այդպիսի անձնաւորութիւններէ ետ պահանջել թերթերը, և մեզ վերադարձնել:

Անոնք որ՝ հակառակ մեր ազդարարութեան, կամ թերթերը ետ տալ չուզեն և կամ փոխարժէքը չի վճարեն, հետզհետէ իրենց անունը պիտի հրատարակենք հոս:

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

Իզմիր. — Մ. Ն. Միքայէլեան էֆ. — Անցեալ շաբթուան թղթակցութեանց մէջ գիտած էինք որ քիմիական պարարտանիւթերու ժախնակը անցած է ծառերու համար. բայց քանի որ կուզէք անպատճառ գաղտնար մ'ուշեցնալ, յառաջիկայ թւոյն մէջ հակիրճ տեսութիւն մը կը հրատարակենք այդ մասին:

Իզմիր. — Գործակալ. — Ստացած ենք ձեր բաց նամակը, ըստ այնմ կը զրկենք բաժանորդաց ընկալագրերը:

Երզնկա. — Յ. Յ. Տմպրեան էֆ. — Ստացած ենք ձեր նամակը. թերթօնի մասին ըրած զխոտուղութիւննիդ շատ ճիշդ է թէ շաբաթաթերթի մը մէջ երկու երես շատ քիչ է. և կը հարցնէք թէ արդեօք կարելի չէ՞ թերթին պարունակութեան վրայ չորս երես աւելցնել, և զայն սահմանել թերթօնին եւն. Այո՛, շատ լաւ կ'ըլլայ, բայց ցաւ ի սիրտ կը յայտնենք թէ, մեր ներկայ բաժանորդներու թիւը արդէն շատ հեռի է թերթիս այս վիճակին մէջ ունեցած ծախքերը հաւասարաւելուի. և եթէ չորս երեսի ալ յաւելում մը ընենք թերթիս ծաւալին վրայ, այն ատեն ծախքերնիս պիտի կրկնապատկի, կարելի՞ է այդպիսի յանդգնութիւն մը գործել իրաց այս վիճակին մէջ. երբ մանաւանդ դառնութեամբ կը տեսնենք թէ շատ մը բաժանորդներ տակաւին իրենց հին բաժնեգինը զրկել չեն ուզած, որով և թերթիս մատակարարութիւնը մեծ դժուարութիւններու կը մատնեն. այդպիսիները չեն ալ մտածեր որ թերթէն զտու թղթատարի ծախք մ'ալ կը վճարենք:

Իսենք: Ձեր հարցումին կը պատասխանուի. Յիշդ թիւը կը զրկենք:

Սիւլիւրի. — Գործակալ. — Ստացած ենք նամակնիդ. —

Ատարազար. — Մ. Կ. Շիրինեան էֆ. — Շերամարտածութեան համար ծախուիլէն թուղթը Պոլսոյ հրապարակը չի ծախուիր, այլ բերել տայու է Ֆոանոսայէն. —

Այտրն Ազհիսար. — Գ. Շահինեան էֆ. — Ստացած ենք նամակնիդ. կը հրատարակենք մատուորապէս,

Այտրն. — Օր. Զ. Եաղճեան. — Ստացած ենք նամակնիդ, և իր պարունակութիւնը եղող նոր շրջանի երեքբաժնեգինները. խմբագրութիւնս իր մասնաւոր շնորհակալութիւնը կը մատուցանէ ձեր այն համակրալիր ջանքերուն՝ զոր կը տածէք Հանրագիտակի յառաջգիտութեան համար. Ձեր նոր ցոյց տուած բաժանորդին կը զրկուի նոր շրջանի առաջին թիւէն:

Վ Ե Բ Զ Ա Պ Է Ս

Լոյս տեսաւ ՄԱՆՅԱԹՐԱՅԱՅԹ ՍԻՍԹԷՄԷՆ որ տասը շաբաթէն կուսուցանէ Ֆրանսերէն կարգաւ ու սահուն կերպով խօսիլ:

Ամբողջ գործը կը բաղկանայ 15 տետրերէ, գին 30 դր:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ պատկերազարդ. որ կը բաղկանայ 3 հատորէ այս անգամ վերատրին տպագրուեցաւ Ա. մասը ընտիր թղթի վրայ: Գին 50 փրջ:

Այս քերականութիւնը որ պատկերներու վրայ նոր բնական մեթոտով կուսուցանէ հայ լեզուն, գնահատուած է բոլոր մանկավարժներէ:

Հ Ի Բ Զ Ա Պ Է Ն

ԱՐԾԱԹՄԱՏԵՆԻԿ ՀԱՅ ՏՂՈՑ. — Ազգ. Ուսումն. Խորհրդոյ Ուսմանց ծրագրի համաձայն պատրաստուած այն գիրքն կ'ուսուցանէ կարգապահը հասկնալ, բացատրել և չարազրկել, միակ գիրքն իր տեսակին մէջ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ԽՐԱՍԳՐԱԳԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ՌՈՒՍՏ

Գ. ՇՐՁԱՆ

ԹԻԻ 54

1899 ԱՊՐԻԼ 3

ԿՏԱԿԻ ՄԸ ԱՌԹԻԻ

Միւսները չկարծէք: Աս ուրիշ է, առ սրտաբուխ, առ խորապէս անկեղծ կրտա-
կը: Եղիսյին կտակը, գրադէտինը:
Թերթերուն մէջ կարգացի ասկէջ
երկու շաբաթ առաջ՝ տեսակ մը հոգե-
կան անհանդիստ ուղեմուտով՝ այն լուրը
որով Տէմիրճիպոլեան իր ամբողջ հարս-
տութիւնը կազմող 42 ոսկին Իզմիրեանց
Յանձնաժողովին կը նուիրէ: Եւ այդ
քանի մը տողերն ալ՝ բացի մէկ քանի
համակրողներէն՝ ամենուն կողմէն ան-
տարբերութեամբ մը կարգացուեցան...
"չ-լուրի մը պէս":

Նախ, անկեղծութեամբ յարեւէ յե-
տոյ թէ՛ ինծի համար այդ նուէրը ո՞ր-
չափ նախընտրելի է քան այդ կտակը
կանխող երկու միւս զաւեշտականները,
աւելորդ չեմ համարելի քանի մը խօսքեր
ընել այդ «հարստութեան» և նուիրա-
տուն արժանիքին միջև գտնուած խո-
տորնակ համեմատութեան, ինչպէս և

յարակից վերաբերութեանց մասին:

* *

Ձեռք կրնար ուժգին սրանեղութիւն
մը ծածկել ամէն անգամոր մեր գրա-
դէտներէն, արուեստագէտներէն կամ
գերատաններէն աղքատ մեռնողներ գը-
նուին: Այդ արուեստամեռիկ երեւոյթը
ալ համաճարակի պէս բան մըն է դար-
ձած մեր քրական կամ բեմական աս-
պարէզներուն մէջ. կարծես ատենց հա-
մար համանիշ մըն է արուեստագէտ
և աղքատ մեռնիլ զուգահեռականը:
Այս անգամ, բացառիկ պարագայ մըն է
գրական նպասակի մը համար կատար-
ուած նուիրատուութիւն մը... գրադէ-
տի մը կողմէն: Ան ալ 42 ոսկի... Ու
հոս խորհրդածութիւններ, նկատառում-
ներ չեն ուշանար մեր միտքը պաշարելու:

Դով քովի բերէք, խնդրեմ, նիւթա-
կան քանակը և մոտաւորական քանակը
եղիա Տէմիրճիպոլեանին. ինչ հանե-
լուկ, ինչ հակաբնական պատկեր: Դա-
րերու քունէն արթնցողի մը ապշալիւ-
նը կ'ունենամ ես՝ այդ առեղծուածին

հանդէպ: Ու պահ մը իրարու հետ կը չփոխեմ՝ եղիան և... եղիա Մարգարէն: Բայց զարթնումս ցաւագին կըլլայ երբ ճշմարտութիւնը հոգւոյս մէջ կը խուժէ: Մեր եղիան է, մեր Գրականութեան դիւաւոր ջահակիրներէն մին, մեր իմաստասիրութեան քրմապետը, որ բախտին տարօրինակ մէկ կատակովը և իրականութեան անգութ մէկ քմահաճայքովը՝ ճզճիմ հարստութեան մէջ տիրացեր միայն: «Հարստութիւն» պիտի չանուանէի բնաւ այդ հեգնական գումարը եթէ մօտէն չճանչնայի այն լայն ու զգայուն սիրաւ որ իր նուէրին հոգիին մէջ մարդասիրական և առաքելական գթութեան բարախումբներ է դրած...

Հեգնական գումար, իրօք հեգնական: Եթէ պահ մը խորհինք թէ ի՞նչ ըրած ենք այն հոկային համար որ դարեւ խորհուրդներ պարզած մերկացուցած է մեր աչքին առջև, գրական, իմաստասիրական, գեղագիտական, ուսումնասիրական շարժումներ ամէնքն ալ, հին թէ նոր, մեծ թէ պզտիկ, արտայայտիկ կամ միջակ, որ մեր մտաւորականութեան անգոյն ու քմածին պարտէզին մէջ իր բարի ու անկեղծ Մտածումը հնչեցուցած է այնչափ տարիներ, այնչափ դարեր պիտի ըլլէի: Եւ հիմայ, այդ տաղանդատ վաստակաւորին առջև, արհամարհանքէ, անտարբերութենէ զատ ուրիշ զգացում մը չեն յայտնուէր մեր մեծերն ալ, մեր միջակներն ալ, մեր պզտիկներն ալ: (*)

Ֆրանսական, ինչպէս ուրիշ թերթերու մէջ, ամէն օր կը հանդիպինք անհաւատալի լուրերու, անակնկալներու՝ մեծ մասամբ Գրականութեան աշխարհի շուրջ դարձող: Այսօր հարուստ մըն է որ այնչափ գումար կը նուիրէ այսինչ հաստատութեան, վաղը գրագէտ մըն է, հարուստ ա՛ն ալ, որ մեռնելէն վերջ, խոշոր բաժին մը կը թողու գրական յանձնաժողովի մը և այսպէս շարունակաբար:

Հոն, հեղինակ, բանաստեղծ, դերասան՝ հարուստ և բարեկեցիկ են մեծ մասամբ ֆրանսական խորխոռ Ոստանին մէջ, ինչպէս այլուր: Որովհետեւ «մատուցում»ը և «խնդրանք»ը հաշտուած են գրեթէ. գրքի սպառում կայ, ճաշակ կայ, հետաքրքրութիւն կայ, մտքի զարգացում կայ:

Որչափ ատեն որ մեր մէջ ընթերցասիրութեան ոգին և քաջալերանքի շարժումը պակսին, որչափ ատեն որ չուղենք գնահատել զուր իր այս ինչ արժանիքին կամ այն ինչ յատկութեանց համեմատ, այնչափ ատեն ալ մեր լաւագոյն արուեստագէտները, հեղինակները, դերասանները աղքատ և պարտատէր պիտի մեռնին:

* *

Եթէ եղիան, ինչ որ կը հաւատանք, իր նուէրը լոկ եղբայրասիրական զգացումով մըն է ըրած, ես անոր քով պիտի համարձակիմ կցել ուրիշ զգացում մըն ալ, — իմ կողմէս — հակաջնային զգացումը: Այդ գումարը հեգնութիւն մըն է՝ իմ մասին՝ ներուած ճակտին բոլոր անոնց որոնք նիւթին համար ու նիւթին շուրջ կ'ապրին միայն, հողին վրայ, տափակ ու մո՛ւլթ, չկրնալով վերցնել պահ մը աչքերնին՝ վերք, երկինքը որ կը վերացնէ, կ'աղնուացնէ մարդը, և հեռուն, ծովուն որ կը կրթէ մեր սիրտը:

Եղիային նուէրը նուիրական է մեզ համար քանի որ փառասիրական, անմահացնող տենջերու դառն աղբիւրէն չի բղխի: Իր սրտէն կը բղխի միայն թէ և կարծողներ կան — միամիտներ — թէ այդ կտակով ակնարկել կ'ուզէ «քիչ արձաւորը՝ հոգիէն, շատ տուողը հարստութենէն կուտայ» առածին, բայց իր այդ «քիչ»ը իր «շատ»ն է արդէն: Այդ կտակը ճշմարիտն է, աննմանն է, սուրբն է, Պօսիւէական դամբանական մը՝ բոլոր «կատակ»ներուն, բոլոր «ոչ-կտակ»ներուն համար:

ՄԻՋՐԱՆ ՌԻՂՈՒՐԵԱՆ

(*) Այս մասին՝ ուրիշ յօդուածով:

ՄԱՋԱԲԱՆՔ

ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

Ա. ՄԱՍ

Ընդհանուր յարմարություններ

ՆԱԽԱԴՐՈՒՄ

Լաւ շարադրութենէ մը երեք բան կը պահանջուի:—

1. Անիկա հեղինակին միտքը պայծառօրէն հաղորդելու է անոնց՝ որոնց կ'ուզուի, — ունենալու է ՅՍՏԱԿՈՒԹԻՒՆ:

2. Անիկա հեղինակին խորհուրդը հզօրապէս տպաւորելու է ղեկացիներն մտքին վրայ, — ունենալու է ԶՕՐՈՒԹԻՒՆ:

3. Անիկա հեղինակին խորհուրդը յանկուցիչ եղանակով ներկայացնելու է ունկընդիւնելու եւ կամ ընթերցողներուն. ունենալու է ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ:

Յստակութիւն, Զօրութիւն եւ Գեղեցկութիւն, — ահա շարադրութեան ընդհանուր յատկութիւնները:

Այս յատկութեանց վրայ խօսելէ առաջ՝ հարկաւոր կը համարինք ցուցնել այն միջոցները, որոնք գրողի մը բառարանը ճոխացնելու կը ծառայեն:

ԲԱՌԵՐՈՒ ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԻՐԱՑՈՒՄ. — Գաղափարներ արտայայտելէ առաջ պանոնք արտայայտող բառեր ունենալու է մարդ: ճարտար գրող մը կամ խօսող մը ըլլալու համար՝ իր տրամադրութեան տակ հարուստ բառարան մը ունենալու է մարդ: Դպրոցական շարադրութեանց խեղճուկ ըլլալուն պատճառը՝ ոչ միայն խորհուրդի, այլ նաեւ լեզուի ողջատութիւնն է: Գրողի մը բառարանը ընդարձակ ըլլալու է, — գրող մը բառ գիտնալու է, չատ բառ: Բայց բառ գիտնալը՝ չի նշանակեր բառերու գոյութեան վիպ ըլլալ, այլ՝ անոնց իմաստին տիրանալ. զի չենք կրնար գործածել կամ սխալ կը գործածենք այն բառը՝ որուն նշանակութիւնը չենք գիտեր:

Սակայն բառերու ծանօթանալը բաւական չէ. զանոնք ղեկութեամբ գործածելու կա-

րողութիւն ալ ստանալու ենք: Բառերուն այնպէս տիրանալու ենք որ անոնք, հաւատարիմ ծառաներու պէս, միշտ պատրաստ ըլլան գործածուելու. որպէս զի՝ երբ գրելու նստինք, զանոնք միտք բերելու դժուարութիւն չի կրենք:

Մեր բառարանը ճոխացնելու եւ մեր սովորած բառերուն կատարելապէս տիրանալու համար՝ կրնանք գործածել հետեւեալ միջոցները:

1. **ԸՆԹԵՐՑՈՒՄ.** — Լեզուի մէջ հեղինակութիւն ճանչցուած ընտիր անձերու գլխաւորութեան ընթերցումը ընթերցումը բառերու նոր պաշար կը հայթայթէ մեզի, ու միանգամայն իւրաքանչիւր բառի գործածութեան տեղը կը սորվեցնէ: Լաւ թերթերու ընթերցումը նուազ օգտակար չէ. դիտուած է որ ընթերցող աշակերտները շարադրելու մէջ աւելի յաջողակ են քան իրենց այն դասընկերները, որոնք ընտիր հեղինակներ սովորութեամբ կարդալու անիոյթ են:

2. **ԲԱՌԱՐԱՆԻ ԳՈՐԾԱԾՈՒՄ.** — Բառերու իմաստին վրայ ճիշդ ծանօթութիւն ստանալու համար՝ բառարանի գործածումը անհրաժեշտ է: Ամէն ուսանող ընթերցման պահուն դիմելու է բառարանի, ամէն անգամ որ նոր բառի մը հանդիպի կամ բառի մը նշանակութեան մասին խնդիր ծագի մտքին մէջ: Մինչեւ իսկ յառաջացածներու համար՝ բառարանի ծայրէ ի ծայր ընթերցումն ալ կըրնայ իր օգտակարութիւնը ունենալ:

3. **ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒԹԻՒՆ.** — Պատուական վարժութիւն մ'է արձակ եւ ստանաւոր ընտիր կտորներու ընդօրինակումը ընթերցելի գրելով եւ կետադրութեան աւել զննելով: Ամէն հասակի մանաւանդ լեզուի ուսման առաջին տարիներուն մէջ այս վարժութիւնը ամենօրեայ ըլլալու է: Այս վարժութիւնը իր պարզութեան համար արհամարհուելու չէ:

4. **ԲԵՐԱՆԱՑԻ ՈՒՍՈՒՄ.** — Ընդօրինակութեան հետ բնականօրէն յիշուելու է մեծ հեղինակներու ամէնէն գեղեցիկ կտորներու բերանացի ուսումը: Բերանացի ուսումը կտորը բարձրագոյն արտասանուելու է ատեն ատեն՝ մինչեւ որ ուսանողը հաւաստի ըլլայ թէ յիշողութիւնը անկորուստ պիտի

ստիճակէ վանիկա : Ընդօրինակութիւնն ու բերանացի ուսումը մեծապէս կը նպաստեն բառերն ու խօսքի ձեւերը իւրացնելու :

5. ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ. — Անոնք որ միայն իրենց խորհուրդները արտայայտել սորված են՝ իրենց համար անգիտակցօրէն կը կազմեն բազմապատկառ ավքառ բառարան մը : Գրարարէ կամ օտար լեզուէ թարգմանութիւնը կը ներկայացնէ անոնց նոր խորհուրդներ, որոնք նոր բառեր ու բացատրութեան նոր ձևեր կը պահանջեն : Բացատրութեան տարբեր ձևեր ու դարձուածներ՝ որոնց հարկ կ'ըլլայ դիմել՝ կ'առաջնորդեն աշակերտներուն «կշռել» բառերն ու ասացումները, և որոշել ուղիղն ու սխալը, լաւն ու յոռին : Այս կերպով՝ ոչ միայն իրենց հայեցողի սահմանը կ'ընդարձակի, ու լոկ իրենց սիրական բառերը գործածելու սովորութեան կ'ազատին, այլ նաև լեզուի մասին քննադատական կարողութիւննին ալ կը մշակուի :

Յզկուած աշխարհարարով թարգմանուած գործերու բնագիրներէն հատուածներու թարգմանումն, ու ետքը այս թարգմանածոյ հատուածները հայերէն բնագրին հետ բաղդատելով վրիպակներու ուղղումը՝ յոյժ շահեկան վարժութիւն մըն է ստիճային լեզուին մէջ զարգանալու համար :

6. — ՆՄԱՆՈՂՈՒԹԻՒՆ. — Ուշադրութեամբ ու քանի մը անգամ պէտք է կարդալ նիւթի մը վրայ գրուած գեղեցիկ կըտոր մը, ու յետոյ նոյն նիւթին վրայ գրել, ապա՝ ստացուած արդիւնքը բաղդատել օրինակ ընտրուած կտորին հետ : Օրինակը կըրնայ միշտ գերադասեց մնալ, ու նմանողը կարելի է միշտ վրիպի. բայց սխալ չէ, պէտք է յիշել այն հին ու յոյժ ճշմարիտ ստացուածը թէ՛ դէպի յաջողութիւն չիտակ ճանապարհը՝ վրիպումն է :

7. — ԻՆՔՆԱԳԻՐ ՇՍՐԱԳՐՈՒԹԻՒՆ. — Մեր սորված բառերը գործածելով՝ զանոնք հլու հսկատակներ կ'ընենք մեր կամքին : Գրելով կը վարժուինք նաև թռչիլ մեր սեփական թևերով : Սակայն հապճեպով գրելու չէ : Իւրաքանչիւր բառ պէտք է կշռուի : Բառերը պէտք չէ գործածել իրլե լոկ բառեր, այլ իրլե գաղափարներու ներկայացուցիչներ : Երբ

բեմն աւելի քիչ յոյս կայ այն սկսնակ գրողին որ իր յիշողութեան ներկայացող առաջին բացը կը գործածէ՝ քան անկէ որ երկու բառերու միջև կը վարանի : Առաջինին դիւրութիւնը կըրնայ աղետալի ըլլալ լաւ ոճ ստանալու համար : Երկրորդին յամրութիւնը՝ ճիշդ բացատրութիւնը փնտռելու ունակութիւնը կը սնուցանէ, ինչ որ զայն գտնելու կարողութեան կը փոխուի յաճախ :

6. — ՍՏՈՒԳՍԲԱՆՈՒԹԻՒՆ. — Բառերու իմաստին տիրանալու մեծապէս կը նպաստեն :

1. — Գիտնալ ածանցական մասնիկներուն նշանակութիւնները :

2. — Սորվիլ բարդ բառերուն կազմութեան օրէնքները :

3. — Բարդ բառերուն լրացումը — իրենց մասերուն զատումն ու իւրաքանչիւր մասին նշանակութեան գտնումը :

Պարտիզակ
Եւ.

Ս. Մ. Գ. — Գ. — Գ.

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ

ԹԻՆՆԻՆԵՐՈՒ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ ՄԸ

Արմատաներ (Գ. — Գ. — Գ.)

Ատենէ մի վեր, դիմումներ կ'ըլլան Հիւնթիւտակի Խմադրութեան, թթենինքրու հիւնթութեան մը մասին, որ ըսուածին կամ գրուածին նայելով, ընդարձակօրէն ստղծուած է Իգլիտի գաւառին մէջ : Բուրա է՞. իրաւամբ դիտել կուտայ յօդուածագիրներուն թէ, հիւանդութեան տեսակն ու անոր դարմանն կարենալ որոշելու համար՝ աւելի ճոխ տեղեկութիւններու ու տեղւոյն վրայ մասնաւոր քննութեան պէտք ունի. քանի որ շատ մը հիւանդութիւններ, գրեթէ նոյն եղանակաւ կ'սպաննեն թթենիները : Արդ, որովհետեւ այս անգամ մենք առիթ ունեցանք, հիւանդութիւնը մօտէն ուսումնասիրելու Պարտիզակի մէջ, մեր քննու-

թեանց արդիւնքը միայնելով գիտական ա-
մենակարեւոր ծանօթութիւններու, պիտի ջա-
նաճարձակուի Հանրագիտակի հանրագումար
էջերուն մէջ:

Հիւանդութիւնը սնկային է պարզապէս,
եւ յառաջ կը գտայ Առնիկայի Մէլէա կամ
Ակառիգում Մէլէիւս ըստած ստեղծելու Ասոր
անկասկած (Միսէլիում) շատ ատեն, կը մտնէ
կենդանի ծառերու արմատներուն մէջ, կ'առ-
րածուի հետզհետէ, դէպի վեր կը յառա-
ջանայ ու կը հասնի վերջնական գրեթէ հո-
ղին մակերեսը, ուր, շատ անգամ, անփայլ
դեղին գոյնով ստեղծելի կ'արտադրէ, որք շատ
երկրներու մէջ իր ուսանելիք կը գործած-
ուին:

Կը յարձակի անտառի շատ մը ծառերու,
ինչպէս նաեւ պտղատու ծառերէն խնձորե-
նիներու, թզենիներու եւ, վրայ, սակայն
իր նախընտրածը թթենին ըլլալ կը թուի:
Երբ ծառ մը կը չորնայ ասկէ, իր օգուտին
մասի փայտը փոխարինութիւն մը չկրէր: Մի-
այն ներքնահողային մասն է որ կը փոփո-
կայակերպուի: Այս աւերում, թէեւ կեղեւի
մասը հաշուի չառնելով, շրջապատէն դէպի
կեղտոն, հազիւ 10 հարիւրորդամէթր կրնայ
յառաջանալ, ոսկայն որովհետեւ աստիճան-
ները այն մասերն են որ, անոնցմով միայն
կարելի է ոնունդ առնել, հետեւ թիւնը
ծառին մէջը կ'ըլլայ քիչ ատենէն:

Մակարածային հիւանդութիւններէ բոլոր-
նոց ծառերը վրայ, ընդհանրապէս անդի
ունեցած չեն նման, հետ ալ, գրեթէ միշտ,
ծծող ու ածող անասն, անկաներն է որ, կը
տեսնուի կոճղին կամ արձատններուն վրայ,
գոտեւոր ստեղծելը, մասնաւոր ատեններ ու
այն ալ շատ հազուադիւրորէն կը պատահի
որ երեւնան, մենք մեր քննութեանց միջո-
ցին բնաւ չարտահանեցանք անոնց, ու չկրնինք
գտնել մէկն, որ սեռած ըլլար գտնուի
թթենիներու վրայ: (*)

(*) Սաշափը միայն կարելի եղաւ ստու-
գել թէ, մեր նկարագրածին շատ նման ստեղ-
կեր, երբեմն կը տեսնուէին պարտէզներու
մէջ, աշատ հոգի վրայ, միւս կողմէ ալ,
դարձեալ, նմանօրինակ ստեղծելի կը բերուէին
մօսակայ լեռներէն, որք ուսուելու կը ծա-
նայեն: Գիւղացիք, «լեռան ստեղծ» անունը
կուտան անոր:

Բայց, որովհետեւ Առնիկայի անկասկած
շատ մը մասնաւոր յատկութիւններ ունի,
անոնց ճանաչումը չի կրնար ըլլալ ընդհան-
րութեամբ, գոնէ շատ հաւանորէն կրնայ հա-
տուել անոր նոյնութիւնը, ճոյն իսկ երբ
պողտրերում չը կենայ, ինչպէս պատահեցու
մեզի:

Առնիկայի անկասկած գտնուած տեղին
հիւստածքները աւերող, փոտեցնող նուրբ
թերթիկներու ձեւին տակ փայտին ու կե-
ղեւին միջեւ, և ամենանուրբ թերթու տես-
քով, կոճղին ներսի մասին մէջ, տեսնուելէ
զատ, դուրս ալ կը տարածուի, հոգին մէջ,
կը սողոսկի դէպ յառաջ, անկանոնօրէն ճիւ-
ղեր կ'արձակէ, կը դառնայ արմատին կամ
կոճղին շուրջը, կը սլուէ անոր, ու մութ
թուխ գոյնով պարանի մի տեսքը կ'ընծայէ,
որ իր մէջ կը պարունակէ տեսակ մը ճեր-
մակ ծուծ (Մօէլ). այս պարաններուն «ար-
մատակերպ» անունը կը տրուի:

Ուրիշ շատ մը ստեղծելի ալ, Առնիկայի
նման միսէլիում մը ունին, որոց ամենանուրբ
թերթերը, պարան մը կազմելու նպատակաւ
կը միանան. այս պարանը կազմող թերթի-
կներէն անոնք որ քիչերն են մնացած են ճեր-
մակ կը մնան ու յառաջ կը բերեն ծուծի
մասը. իսկ անոնք որ շրջապատը կը գլու-
նուին, երթալով կը թիւցնան ու կեղեւը կը
կազմեն. ասկէ յառաջ կուգայ բաւական
նմանութիւն մը ծառերու արմատին, եւ այս
պարանով է որ կը կոչուի «արմատակերպ»
(Ռիզոմօրֆ):

Առնիկայի արմատակերպը, գրեթէ
զբաղած եւ կամ քիչ մ'աւելի սարսափեցած,
պարանի մը կը նմանի: Տրամագիծը 2ն 4 մի-
լիմէթր է ընդհանրապէս: Գոյնը, երբ նոր
հանուած է խոկաւ հոգէ մը, սեւ է ու փայ-
լուն: Երբ կը չորնայ, կը կորսնցնէ իր փայլը
ու սեւութիւնը, ու մութ-թուխ գոյն մը
կ'ըզենու: Երբ թրջեք, դ'արձակուի դառնայ,
իր ստվի միճակին, զմայնկուն է, ու երկու
ծայրերէն քաշուած ատեն, բաւական ոյժ
կը պահանջէ իր թիւք համար: Երբ գոյն-
տակերպը իր լայնութեանը փորեա, երկու
շրջանակ կը կազմուի, մին ներքին, որ ճեր-
մակ է եւ կը կազմէ ծուծի մասը, իսկ միւսը
արտաքին, որ սեւ է ու կը զաւգմէ կեղեւի
մասը: Կեղեւը հազիւ, թուղթի թանձր թեր-

թիւ մը չափ հապաղութիւն ունի։ Ամենէն դուրսի մասը խիստ կարծր է ու դիւրաւիշուր, իսկ ծուծի մասը քնքհահառաւին, կակուղ է քիչ-չաւ, դիւրաւ չը բեկանիր, կազմուած է ամենանուրբ թելիկներէ, պէ կեղեւին կազմած խոզովակին մէջ կ'երկարին, եւ դիմաց-կուն են։ Այս թելեր խիստ յտակ կերպով կը տեսնուին մանրաբէտի ներքեւ, ինչպէս մենք յաջողեցանք տեսնել, արմատակերպին երկայնքէն առնուած, ամենանուրբ շերտի մը վրայ։

Արմատակերպները, կամ ազատօրէն կը մեծնան ու կ'աճին հողին մէջ, երկնալով ու յառաջ երթալով գէպ ուրիշ ծառ մը, կամ, իրենց միախառնէն արդէն ճարակուած ծառին շուրջը դառնալով, կը փաթթուին անոր ու իրենց աճող ծայրովը կը ծակեն արմատին կեղեւը, կը մտնեն մէջը. եւ կեղեւին ու փայտին միջեւ, նուրբ ու ճերմակ եւ անմիջական կերպով իրարու յաջորդող թերթիկներու տեսքով, կը տարածուին ա-մէն ուղղութեամբ, հովահարածեւ։ Այս թերթիկներու «ներքնակեղեւային արմատակերպ» (միգոֆորի Սու-գորթիքալ) անունը կուտան, զանազաներու համար դուրսի պարանաձեւերէն, որք «ներքահողային» են (միգոֆորի սութէրէն)։

Ներքնակեղեւային արմատակերպներու հետուածքը շատ կը նմանի պարանաձեւերուն. հոս ան կեղեւ մը կայ յետին աստիճան նուրբ, խիստ քիչ գունաւորուած կամ բոլորովին անգոյն, որ կը շրջակառէ ուղեղային մասը։ Ելլէ կեղեւը, որ, ամենանուրբ կաշի մ'է, կազմուած երկու կամ երեք իսաւ բջիջներէ, այնքան ուժգնօրէն չը կառչի միջամուտի եղանակ արմատի փայտին ու կեղեւի ներքին մասերուն, որ երբ փարակուած արմատին կեղեւը զատենք փայտէն, գրէթէ միշտ մէջտեղէն պատուած կ'ըլլանք այդ ներքնակեղեւային արմատակերպը՝ ձոր կէս առ կէս կը մնայ կեղեւին ներքին չէ փայտին արտաքին մասերուն վրայ։ Ահա ասոր համար է որ, նմանօրինակ պարագաներու մէջ, գրէթէ միշտ ուղեղային մաքուր ու ճերմակ մասը կը ներկայանայ մեր աչքերուն։ Սա աւելի դիւրաւ կը փորձուի արմատներու բարակ մասերուն վրայ։

Ներքնակեղեւային արմատակերպը, այն սնկապերային (Միսելիէն) թելերով, որ, կ'ու-

ղարկէ թէ գէպի չըջապատ կեղեւին եւ թէ գէպի կեղրոն ուղեղային ճառագայթներու ճամբով փայտին մէջ, շատ չանցած, կը լինեցնէ իր գտնուած վայրին գոյծը։ Աւելի կեղեւային մասն է որ արագօրէն կ'գրաւուի այդ աւերիչ թելերէն, շուտով կը կորսնցնէ իր գիմացկունութիւնը, կը փտտի, կը ջրոտի, կը ջնկի։ Փայտն ալ դերձ չմնար ա-նոր ճիրաններէն։ Ծառին ներքնակողային մասը, մինչեւ արմատներու բաժանման կէտը, հոն, ուր ներքնակեղեւային արմատակերպը իր թանձրութեան բարձրագոյն աստիճանին կը հասնի, փայտի մասը կամաց կամաց կը խաւանայ, կը թելանայ, կը սարսկուի ու կը փտտի, թէեւ այս փտուելուն շատ խոր չերթար։ Երբ բաւական ժամանակ անցնի, ծառի մը չորնալէն վերջ պզտիկ բաղ-խում մը կրնայ զայն գետին ձգել, երբ արդէն շատ ատեն անցած է, ծառը կ'ընայ ինքնին, կամ պզտիկ հովէ մը, չկրնալով դիմանալ այն բեւեռն, որ կը ծանրանայ իր վրայ։ Ասիկայ կը պատահի աւելի անտառներու մէջ։ Չմոռնանք ըսելու թէ վարակուած մասերը նմանի որոշ հատ մ'ունեն։

Արմիլարիաի քօտեւոր սունկերը, Հոկտեմբերի ատենները կը կազմուին եւ, կեղեւնան ընդհանրապէս, կամ վարակուած ծառի մը կոճղին վրայ, որ ներքնակեղեւային արմատակերպ մը կը պարունակէ, եւ կամ հողին մէջ տարածուող պարանաձեւ արմատակերպներուն վրայ։ (*) Անոնց գոյնը գեղեցորակ մեղրանման է արտաքին երեսին վրայ։ Ներքին մասը, ծածկուած նուրբ ու մանրեւեր պարունակող եւ ճառագայթաձեւ շարուած թերթիկներով, եզերքին մօտ ճերմակի վրայ, յետոյ մազոյն կամ թուխ բիծերով կետագրուած կ'ըլլայ։ Կոթունը կամ բունը՝ որ նախ լեցուն է, հետզհետէ կը խուսոյանայ ու իր կատարին մօտ կը կրէ օղակ մը, չոր հոս գօտի կ'անուանեն, որ մնացորդն է սունկին մատող եղած ժամանակ, գլխու (Շաբօ) ներքեւի մասը ծածկող քուլին։

Պարտիզակ
Եւր.

Յ. Սեւեռ

(*) Ծանոթ կոչելի է որ պարտիզներու մէջ ազատ հողի վրայ տեսնուած սունկերը, այդպէս արմատակերպի մը վրայ կը գտնուին։

ԱՅԳԵՐԱՆԱԿԱՆ

Որժատունի ֆասակար միջատներ և մանա-
բուծային հիւանդութիւններ. — Կոնքեզ. —

Սևաներու —

ՀԱՐՑՈՒՄ ԹԻԻ 85, 86

Մարգուանէն Կիւլպէնկեան Աւետիս է-
ֆէնտի հետեւեալ հարցումները ուզած է
մեզ .

«Տեղւոյս որժատունիերուն վրայ քանի
մը տարիներէ ի վեր տեսակ մը ճճի կը տես-
նուի — որժալուիճէն տարրեր —, որ, երևան
կ'ենէ որժատունիին աչքերը բացուելու մո-
տեցած ատեն, հազիւ բարակ դերձանի մը
հաստութեամբ և մէկ հազ. մէթր երկայն,
կ'լուռէ այդ փափուկ բողբոջները, և երթա-
լով կը մեծնայ, մեծ թրթուր մը կըլլայ, ու
կը պահուի որժատունիի մէկ ծակին, կամ
չորցած մէկ մասին մէջ, ուր հաւկիթ կածէ :
Երկրորդ՝ այգիներուն և պարտէզներուն,
բայց ընդհանրապէս որժատունիերուն և
սարիինաներուն վրայ, մշուշապար կամ անձ-
րեռտ օրեր տեսակ մը խոնավութիւն կ'իջնէ —
տեղական բարբառով «Սան» կ'անուանեն —
խաղողը դեռ ազոխ (գօրուք) եղած ատեն, որ
չի մեծցներ. խաղողի հատերը կը սենան, կը
թռնին և կը չորնան : «Բիւրակն» ի Էրզ թը-
ւոյն (1899) մէջ որժատունիերու ճճիներուն
մասին գեղ մը յանձնարարուած էր՝ սխալու-
ած թոթափում (կախոնի խաթուկ) 1 առ 100
համեմատութեամբ ջուրի մէջ լուծելով, որ-
ժատունիերը լուալ. ի՞նչ աստիճանի օգուտ-
կար եղած է այդ դեղը, և կրնա՞նք հոս ալ
գործածել, ևն :»

ՊԱՏԱՍԽԱՆ

Թրթուրներու մասին տուած տեղեկու-
թիւնիւք շատ տարտամ է, որովհետեւ՝ բազ-
մաթիւ թրթուրներ կան որժատունիը խա-
թարող, թէև ասոնց մէջէն ամենէն աւելի
փտանգաւոր հանցուած են որժատունիի
Հրուկը (pyrale de la vigne) և վարդադոյն
կոնքեզը (cochylis roserana) : Ձեր տուած
բացատրութենէն այնպէս կ'երևի որ, ձեր
որժատունիերը խաթարողը կոնքեզի թըր-

թուրն է : Նկարագրենք նախ այդ միջատի
կազմութիւնը, կեանքը և սովորութիւնները,
և դուք բողբոջներէ ձեր որժատունիերու
վրայ գտնուածներուն հետ :

ՈՐԹԱՏՈՒՆԿԻ ԿՈՆՔԵԶԸ. — Այս թրթու-
նիկը կը պատկանի Գիւլերուկներու ցեղակից
Գալարուկներու ընտանիքին (tortricides). Թե-
ւերուն տարածաշախիւ 13էն 15 հազարորդա-
մէթրի չափ է : Վերի թեւերը սպիւսկայ դե-
ղին գոյնով, իւրաքանչիւրին մէջտեղէն ան-
ցած թիւագոյն գծով մը : Խակ ներքեւի թե-
ւերը գորշակերպ թիւորակ գոյնով (մութ
կամ ազոտոտ մոխրագոյն) :

Թրթուրը ծնած ատեն այնչափ փոքր է,
որ առանձին օրուան մէջ հազիւ թէ կը նըշ-
մարուի : Կատարելութեան մէջ իր երկայ-
նութիւնը հաւասար կ'ըլլայ վեր ի վերայ 1
հարիւրորդամէթրի : Գոյնը՝ նախ ազոտոտ
ձերմակ, յետոյ ազոտոտ վարդերանգ կամ
գորշ վարդաթոյր, գլուխը և ծոծրակը սև,
և այս վերջինը՝ մէջտեղէն երկայնութեանը,
ձերմակ գծով մը երկուքի բաժնուած է :
Կուրծքին տակը գտնուած տոտիկները սև են
նոյնպէս : Մարմինը ծածկուած է նրբին աղ-
ուամագերով :

Կծիծը թիւագոյն է. պոչին կողմը կը կրէ
փոքրիկ ակիւզաձև յաւելուածներ, որոնք կը
ծառայեն՝ պատեանը խողակին ակիւզելու, որ-
պէս զի՝ թրթուրիկը զիւրութեամբ մէջէն
գուրս ելնէ :

Կոնքեզը տարին երկու անգամ կը ծնուի —
գաւորի. փոքրիկ կծիծը՝ ամբողջ ձմեռը կ'ան-
ցունէ որժատունիի կեղեւներուն կամ ձու-
ղերու ելն. ճեղքուածներուն մէջ : Թրթուր-
ներէ տուած տեքստի բեկորով մը պատեան մը
կը գալարեն, որու լէջ մանեւրով կ'որոտայնեն
իրենց խողակը, զոր հախապէս կը կախոն-
մետաքսակերպ թելով մը՝ կամ որժատունիի
մէկ ճիւղէն, և կամ կը հաստատեն ձուլերուն
վրայ՝ նոյնպէս մէկ ծայրէն կախուած :
Մէկ քանիներ ու ձողերուն վրայ տարած-
ուելով, կեղեք կը կրծեն, փոքրիկ խուռչ մը
կը ձեւացնեն և հոն կ'ամփոփուին, կրծուած
փոշիները իրենց պատեանին կամ խողակին
փակցնելով, իրենց բերնէն արտասորած մու-
ծուցիկ հեղանուտով մը. այնպէս որ՝ իրենց
ներկայութիւնը բոլորովին անյայտ կը մնայ :

Երկրին, կլիմային և եղանակին ստեղծած համեմատ, քիչ մը ուշ կ'ստ' աւելի կանախ, բայց ընդհանրապէս մայրի առաջին օրերուն, առաջին սերունդը երեւան կուգայ թիթեռնիկը գիւերները և կամ այգամափին միայն կը թռչտի. ցորեկները կը հանգչի անբերուն ներքեւ կողմը:

Չուգաւորութիւնը՝ որ այդ միջոցներուն տեղի կունենայ, կատարուելէն տնմիջապէս վերջը, ալու թիթեռնիկի կեանքը սպառելով կը մեռնի. իսկ էգը՝ ձուածութեան կ'սկսի, որ կը տեւէ մինչև 15 օր. հաւկիթները ալ տոտ ձերմակ՝ բայց թափանցիկ, զոր կը զետեղէ դեռածիլ բոլորոցներու կամ դեռակալով ողկոյզներու մէջ, այնչափ փոքր են. որ առանց ոսպնիկի (փէրամաֆորը) գրեթէ անկարելի կ'ըլլայ նմարել: Այս հաւկիթներէն չուտով կը ծնին թրթուրները, որոնք կը կըրծեն կ'ուտեն անյապաքար ծաղկարունկը (étamines) և ծաղկէգերը, և կամ նորարոյրով տերեւիկները. ու մետաքսակերպ նրբին թելերով մէկ քանի հատիկներ՝ եթէ ողկոյզի վրայ են, և մէկ քանի տերեւիկներ՝ եթէ պտիւնքներու վրայ են, իրարու կը փաթթեն, և եթէ աննպաստ օդերու պատճառաւ բուսականութիւնը դանդաղօրէն յառաջանայ, փնտը շատ մեծ կ'ըլլայ:

Գրեթէ հինգ շաբաթուան մէջ թրթուրը իր կատարելութեան կը հասնի, և կը քաշուի ողկոյզներուն, կամ կոճղի ճեղքաբուսկներուն, և կամ ուրիշ յարմարագոյն տեղերու մէջ, և ճեղքակ պատեան մը Դոտայնիով, կծիծի կ'այլափոխուի: Տասն և հինգ օր վերջը՝ որ տեղ ունի և կլիմային համեմատութեամբ Օգոստոսի մէջ տեղի կ'ունենայ, երկրորդ սերունդի թիթեռնիկները երեւան կուգան, որոնք ևս իրենց կարգին, զուգաւորութեամբ անմիջապէս վերջը ձուածութեան կ'ընկնեն, և իրենց հաւկիթները կը գեղեցիկ մերթ խաղողի հատիկներուն, մերթ ևս ողկոյզներու շրջաններուն (առանց խաղողի ողկոյզ, չէօի) վրայ: Օգոստոսի մէջ թրթուրները ծնելով, կը ճարակին այս անգամ խաղողի հատիկներուն վրայ:

Մագի նման բարակ և փոքրիկ թրթուրը կը ծակէ խաղողի հատիկը, գլուխը ներս կը մտնի, և սրկրամուրթեամբ կը ծծէ

խաղողին հիւթը. շատ անգամներ ամբողջ մարմնով այդ հատիկին մէջ կը մտնայ, երբեմն ալ խաղողի հատիկ մը ծակելով, անոր հիւթը քիչ մը սորաձելէ վերջ՝ կ'անցնի ուրիշի մը, և այսպէս շարունակարար. այնպէս որ՝ մէկ թրթուր մը մէկ ամսուան մէջ 30էն աւելի խաղողի հատեր կ'ոչնչացնէ: Իւրաքանչիւր թիթեռնիկ 200ի չափ հաւկիթ կ'ածէ, ուրիշ կրնանք հետեցնել թէ՛ ինչ ահագին փնտներ կրնան յառաջ բերել այս վնասնագաւոր փոքրիկները:

Ծակեկուած հատիկները կը թարչամին, կը չորնան. և եթէ եղանակը անձրևոտ է, կը նեխին, և իրենց մերձակից հատիկները կը վարակին: Ընդհանրապէս նախ և առաջ ծայրը գտնուած հատիկներն են որ զոհ կ'երթան:

Սեպտեմբերի մէջ և կամ մինչև հոկտեմբերի վերջերը թրթուրները կը թողուն այլևս խաղողի ողկոյզները, և մեր նախապէս յիշած՝ իրենց ձմերանոցները կը քաշուին հետցնելով:

Ահաւաստի կոնքելը՝ որ կարծեմ ձեր ըսած թրթուրը ըլլալու է. բայց ինչպէս գուք կը կարծէք, թրթուրը չէ որ հաւկիթ կ'ածէ, և որդէն՝ ու է թրթուր կամ գեռուն հաւկիթ չածեր, այլ թիթեռնիկի այլափոխուելէ վերջ կ'ածէ:

Բացատրենք այժմ այդ փնտաւար կակները ոչնչացնելու միջոցները. և թէպէտ շատ տեսակ դեղեր ու դարմաններ առաջարկուած են այս մասին, բայց մենք հոս պիտի դնենք ամենէն աւելի յարմարագոյնները: Միայն թէ՛ ինչպէս ուրիշ առթիւ ըսած ենք, կը կրկնենք հոս, եթէ միմիայն դուք ձեր այգիին համար կիրարկէք, յաջողութիւնը ապահով չըլլար, այլ պէտք է որ բուսական ընդարձակ շրջանակի մը մէջ ամեն այգեգործ միտտեղ ընեն:

Անցողակի գուրցենք թէ, «Բիւրակն»-ի մէջ առաջարկուած դարմանը նախ որթալուծի (Ֆիլոքսերա) համար է, և ոչ թէ խնդրայնիւթ եղալ թրթուրներու. երկրորդ՝ ինչ որ ալ ըլլայ կալիսնի խաթուկի (սիանիւռ. որ բոթախում) ազդեցութիւնը յորեւ միջատապաշտ դեղ. անկարելի է այս պարագային կիրարկել, քանի որ մարդոց անդեման տահմանուած տունկի մը վրայ պիտի կատարուի գոր-

ծողութիւնը, որովհետեւ այդ նիւթը սար-
սափելի թոյն մ'ըլլալով, ոչ միայն միջատնե-
րու՝ այլ և միւսնոյն անգամ մարդոց մահ պի-
տի ցանէք ձեր այգիներուն մէջ. երրորդ՝
այդ դարմանը երեւակայական առաջարկու-
թիւն մ'է, որ իր նմաններուն պէս երեւա-
կայութեան մէջ կը ծնի ու կը մեռնի, առանց
իրական աշխարհի մէջ մոռնալու: Եթէ երրէք
այդ գիտական յօդուածի ըսածին պէս,
Փռանապի մէկ քանի այգեգործներ սքան-
չելի արդիւնք ձեռք բերած ըլլային, Պ.
Հանրի Կօրէն պէտք էր արժանանար ա՛յն
մրցանակին՝ որ պիտի տայ Փռանապի կա-
ռավարութիւնը անո՛ր՝ որ ստուգապէս որ-
թալուիճը ոչնչացնելու մէկ դարմանը, դեղը՝
միջոցը պիտի գտնայ. և այդ մրցանակը
կ'արժէ կոկիկ հարստութիւն մը՝ 300,000
Փռանք:

Գիտական յօդուածները մեծ մասամբ գի-
տութեան թուրքիկ բանաստեղծութիւններն
են, զորս պէտք է կարգաւ, միմիայն մարդ-
կային հանճարին վրայ սքանչանալու, և վե-
րացող երեւակայութեան պահ մը յագուրդ
տալու համար. և անոնց՝ իրական աշխարհի
մէջ կարելիութիւնը և գործադրելիութիւնը
փնտռել մասնագիտական թերթերու մէջ:

Շար.

Ղ. ԲՈՂԱՏ

ՀԱՐՏԱՐԱՐՈՒՆՍՏԱԿԱՆ

ՆԵՐԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Սպիտակացում բամպակեայ մանածներու

Եթէ մանածը սև կամ մութ գոյներով
պիտի ներկուի, ընդհանրապէս ձերմիցնելու
գործողութիւնը գոնց կընեն, և միմիայն ե-
ռացած ջուրի մէջ կեփեն, մինչև որ աղէկ
մը թրջի և կախուցնայ: Իսկ բաց գոյներու

համար, արագօրէն սպիտակացնելու գոր-
ծողութեան կ'ենթարկեն. այսինքն՝ քիչ շատ
անկատար կերպով. խոնաւ մանածը նախ
նատրոնի ընածխատի (սօտա) եռացող՝ բայց
տկար լուծոյթէ մը կ'անցունեն, և յետոյ կի-
րի քլորուկի (քլորէճ գոյմաղը կամ քլորիւռ
առ չօ) թեթեւ և պաղ լուծոյթի մը մէջ կը
լողացունեն մէկ քանի ժամեր. կը լուան յե-
տոյ սարգ ջուրով, կը քամեն և ջրաքլորական
թթուակի (թուգ րուհու) խիտ թեթեւ լու-
ծոյթի մը մէջ կ'ընկղմեն, և վերջապէս խը-
նամով կը լուան:

Ահաւասիկ այժմ կատարեալ սպիտակա-
ցուցման գործողութիւնները:

1. — Լուացք. — Մանածի կարծերը (չիլէ)
նախ իրար կը կապեն այնպէս որ չլթայի մը
ձեւ առնեն, և կը զետեղեն կարգաւ կա-
րասին մէջ (պոյաճը գազանը). 150 քիլօ մո-
նածի համար 200 լիթրա ջուր և 30 քիլօ
կիլոզական նատրոն (սուտ քօսդիք) (*) լե-
ցնելով, կը տաքցնեն մինչև եռացման սա-
տիճան, որ պէտք է տեւէ բամպակին սե-
տակին և աղտոտութեան ատիճանին համե-
մատ՝—ինչ որ մէկ երկու փորձով զիւրու-
թեամբ կը ճանչցուի—6էն 12 ժամ: Այս մի-
միջոցին, ինչպէս ուրիշ առթիւ ըսած ենք,
պէտք է աշալուրջ հսկել որ մանածները ջու-
րին պղտկաներուն ուժով լողարանէն դուրս
չելլեն, որ պատճառ կ'ըլլայ անոնց խաթար-
ման: Սովորական փոքր ներկատուէններու մէջ,
ուր կատարեալագործեալ մեքենաներ չիկան,
մանածները կարասին մէջ զետեղելէ վերջ,
փայտէ ձողիկներ հաստատելով անոնց վրայ,
կ'արգիլեն այս կերպով վեր ելլալէ:

Լուացքը քանապէս վերջ, կարասին տակը
գտնուած կողմնակի ծորակը բանալով նոտ-
րոնջուրը կը վազցնեն, և նոյն ատեն ալ
վրայէն սարգ և մաքուր ջուր կը հոսեցնեն,
մինչև որ մէջը գտնուած ալքալին ամբողջ-
վին սպառի, որ կը տեւէ 45 վարկեանէն
մինչև ժամ մը:

(*) Կիլոզական նատրոնի և կալիի պատ-
րաստութեան եզանալը առանձին յօդուածով
մը պիտի բացատրենք, որպէսզի գաւառացի
ներկարարները իրենք իսկ իրենց ձեռքով
պատրաստեն զիւրութեամբ և աժանու-
թեամբ:

Ծ. Խ.

2. — Քրտացում: — Այս գործողութեան մէջ եթէ գիտարին կէտ մը կայ, այն ալ քրտուկի լոգաջուրը պատրաստելն է: Միևնոյն չափով գործածուած կիրի քրտուկը երբեմն խտացեալ լոգաջուր մը կուտայ, երբեմն ալ տկար: Այս տարբերութիւնը յառաջ կուգայ գլխաւորապէս կիրի քրտուկի այն յատկութենէն, որ օդին մէջ գտնուած խոնաւութիւնը իրեն կը քաշէ. որով՝ միևնոյն ծաւալով և ծանրութեամբ կիրի քրտուկը երբեմն չափ և երբեմն ալ քիչ քրտ կը պարունակէ իր մէջ. և ասկէ յառաջ կուգայ ճերմկեցնելու գործողութեանց մէջ. երբեմն կատարեալ յաջողութիւն, ու երբեմն ալ հակառակը:

Նոյնպէս՝ հրապարակը ծախսուած կիրի քրտուկներու ամենն ալ միևնոյն հաւասար ուժը չեն ունենար, ասիկա ալ իրենց մէջ պարունակած քրտի քանակութեան տարբերութիւնն է:

Ահա այս անդատեհութեանց առաջընտնելու համար, վերջապէս մտածած են փոխանակ քրտուկը կշռելով կամ չափելով լոգաջուրը պատրաստելու, գտնել այնպիսի միջոց մը, որ ամեն պարագայի մէջ, պատրաստուած լոգաջուրը միշտ միևնոյն պահանջը ուժը ունենայ:

Այս առթիւ նախ կը պատրաստեն քրտուկի խտացեալ լուծոյթ մը (կիրի քրտուկը՝ մինչև իր ծանրութեան կէսին չափ ջուրի մէջ կը լուծուի), և լոգաջուրը պատրաստելու ատեն այդ լուծոյթէն կը լեցնեն որոշեալ քանակութեամբ մը: Թէ որչափ պէտք է լեցունել այդ խտացեալ լուծոյթէն լոգարանին մէջ, գիտնալու համար, կը գործածեն այդ ատեն ալ և ալ դրութիւններ. խտաչափ (տանի-մէթր), Պոմէի անօրաչափ (առէօմէթրը Պոմէ) քրտաչափ և ին:

Հին ատենները կը գործածէին լեզակի լուծոյթը, քրտուկի լոգաջուրի զօրութիւնը չափելու համար: Ահաւասիկ թէ ինչպէս կընեն այս գործողութիւնը:

Մէկ մաս լեզակ (չիվիս) կը լուծեն 7 մաս խտացեալ ծծմբական թթւութիւն (զաճեալը) մէջ. (այս ծծմբական թթւութեամբ հրապարակի վրայ կ'իջնեն Նորտ հաուզիի ծծմբական թթւութեամբ, որ ամէնէն խտացեալն է. այնպէս որ, չիլին բերանը բացուած ատեն առատ մու-

խեր կ'արձակէ). այս լուծոյթը կը տարածեն յետոյ 50 մաս ջուրի մէջ:

Այժմ կը պատրաստեն քրտուկի լոգաջուրը և ապակեայ որուակի մը մէջ կը լեցնեն, որոշեալ չափով մաս մը լեզակի լուծոյթ և անոր վրան ալ նոյն չափով քրտուկի լուծաջուր, որ՝ եթէ այդ լեզակի լուծոյթը բոլորովին գունաթափէ և ճերմկեցնէ, այն ատեն կրնաք վստահիլ որ, պատրաստուած լոգաջուրի խտութիւնը ճիշտ և յարմար է, եւ առանց բանալակը խաթարելու կը ճերմկեցնէ: Եթէ փորձին մէջ տեսնուի որ լեզակը բոլորովին չէ գունաթափած, և կամ քրտուկի լուծոյթը տակաւին ամբողջ վրան չի լեցած ճերմկեցած է, պէտք է առաջին պարագային քրտուկի լուծոյթը խտացնել և երկրորդին ալ տկարացնել, ջուր աւելցնելով լոգարանին մէջ մինչև որ պահանջուած աստիճանին հասնի: Ասիկա մէկ երկու փորձերով դիւրաւ ձեռք կը բերուի: Եւ այս միջոցը որ զաւառացիներուն համար դիւրին է, ամենայն վստահութեամբ կրնան գործածել իրենց քրտաջուրը պատրաստելու համար, փոխանակ խաթախումով գործ տեսնելու, որ ինչպէս գիտենք, չափ անգամներ գոհացուցիչ արդիւնք չի տար:

Դ. ԲՈՒԱՏ

ԳԱՄՊԻՈ

Շատ անգամ կը լսենք կամ կը կարդանք լրագրաց մէջ թէ Գամպիոյին գինը բարձրացեր է, կամ իջեր է. անոնք որ վաճառական են կամ սեղանաւոր կամ գործի մարդ, գիտեն ատոր նշանակութիւնը. մենք կ'ուզենք, թերթիս միջոցաւ, համառօտ բացատրութիւն տալ անոնց՝ որ պէտք կ'զգածին չափ տեղեկութիւն չ'ունին և հետաքրքիր են գիտնալու թէ ինչ է գամպիոն և ինչպէս է անոր հաշիւը:

Գամպիոն մէյ մը միևնոյն երկրի մէջ տարբեր տէրութեանց գրամմիւր իրարու հետ փոխանակել կը նշանակէ, մէյ մ'ալ տարբեր

տէրութեանց երկիրներու մէջ տարբեր դը-
րամներ իրարու հետ փոխանակելու չափ
ցուցնող գինը, ժողովուրդը սովոր է ըսել ա-
սոր «Գամպիոյի» գին:

Երբ պարտական և պահանջող միեւնոյն
քաղաքը գտնուին՝ իրենց հաշուական գոր-
ծողութիւնները կարգադրելու շատ դիւրու-
թիւններ կան: Դարձեալ երբ գտնուին երկ-
րի մը տարբեր քաղաքներուն մէջ, զոր օր.
մին Պոլսի միւսը Զմիւռնիա, կամ մին Տրա-
պիզոն միւսը Կարին են. դարձեալ դիւրին է
հաշիւնին կարգադրել փոխանակագրով կամ
ուրիշ միջոցով, քանի որ այդ քաղաքաց մէջ
միեւնոյն Օսմ. լիրան կը գործածուի: Բայց
ինդիւր կը տարբերի երբ անոնցմէ մին և
միւսը տարբեր երկիրներ ըլլան. ինչպէս,
պահանջողը՝ Անգլիա և պարտականը Թուր-
քիա գտնուին. վասնզի այդ երկիրներու դը-
րամաց միութիւնը միեւնոյնը չէ. այսպէս իմա-
ցիր Ֆրանսա, Գերմանիա, Ռուսիա ևլն.

Ինչուք թէ Պոլսեցի վաճառական մը Ման-
չէսթըլէն ապրանք բերել տուած է. հետե-
ւորաւ պարտք ունի. Մանչէսթըլի վաճա-
ռականը՝ որ պահանջ ունի՝ իր պահանջը
անգլիական լիրա կը ճանչնայ. Պոլսեցի վա-
ճառականին ունեցած դրամն Օսմ. լիրա ըլ-
լալով կը պարտաւորի նոյն օրուան գամպիոյի
գինովը փոխանակել անգլ. լիրայի հետ եւ
փոխանակագրով շրջել ի Մանչէսթըլ իր պար-
տաւիրով՝ անդ վճարելի:

Ահա այսպէս տարբեր երկիրներու քա-
ղաքներէ իրարու վրայ քաշուած փոխանա-
կագրերը, որոցմով հաշիւներ կը փակուին,
սակտորական հրապարակին վրայ գամպիո
անունով կը հասկցուին: Գամպիոյի գինն ալ
ապրանքաց գիներու պէս ելեւէջներ ունի. շատ
պատճառներ կան գամպիոյի գնոյն բարձրա-
նալուն և իջնելուն. ինչպէս, դրամի առա-
տուութիւն կամ նուազութիւն, բերքերու յա-
ջողութիւն կամ երաշտութիւն, սնանկու-
թիւնք, դրամական տագնապք, քաղաքական
կացութիւնք ևն:

Հիմայ դիցուք թէ պոլսեցի վաճառականը
500 անգլ. լիրա պարտք ունի Մանչէսթըր
վաճառականի մը. պարտք ունեցողը օսմ. լի-
րաներ առած կը դիմէ սեղանաւորի մը, եւ
ամէն մէկ անգլ. լիրայի փոխարէն Օսմ. ոս-

կեդրամ 110 դր. (108,5—111) ըսել է թէ
550 0. Լ. տալով 500 անգլ. լիրայի փոխա-
նակագիր մը կ'առնէ և կը շրջէ. ահա գամ-
պիոն. անգլիական լիրան օսմ. ոսկեդրամով
(108,5—111) շուկէն դր. և երբեմն աւելի
տարբերութիւն կրնայ կրել, այս է սղելը և
աժննալը, զոր գլխաւորապէս վերեւ յիշուած
պատճառներէ զատ Խնդրանքի և Մատուցու-
մի ընծայելու է:

Գործի մարդիկ գամպիոն շատ անգամ
նոյն երկրի մայրաքաղաքին կամ դրամին ա-
նունով կը յիշեն. զոր օրինակ, «Լոնտրան
սուղ է», «Փարիզը աժան է» կամ «Աթէնքի-
նը սուղ է», «Ֆրանքը աժան է» ըսելով կը
հասկցուի Անգլիոյ վրայ Ֆրանսայի վրայ քաշ-
ուած փոխանակագրերը:

Գամպիոն կ'ունենայ այլևայլ պայմանա-
ժամ, սովորաբար երեք ամիս, և կը գրուի
այսպէս Յիմա: Գամպիոյի գինը կ'որոշուի
մայրաքաղաքներու սակարանին մէջ. իսկ
Պոլսոյ մէջ Օսմ. Կայս. Պանքսն և Բրէտի
Լիոնէն կ'որոշեն:

Այս համառօտ տեղեկութիւնը տալէ յե-
տոյ, հետեւեալ ինդիւրները լրծենք:

Ա. 450 անգլ. լիրայի Յիմա. Լոնտրայի
թուղթ մը գնեցի 109 դր. 37ուկէս փարա-
յէն. քանի՞ 0. Լ. պիտի վճարեմ:

Պէտք է գամպիոյին գինը որ 109 դր.
37ուկէս փարա է՝ 450ով բազմապատկել:

$$109,9375 \times 450 = 494,771875$$

(9375ը 37ուկէս փարային տասնորդականն է)

Պատ. 494 0. Լ. 71 դր. 35 փարա է:

Բ.—6000 ֆրանքի Յիմա. Փարիզի վրայ
թուղթ մը գնեցի 22,95էն, քանի՞ 0. Լիրա
կ'ընէ:

Պէտք է 6000ը բաժնել գամպիոյին գնով
որ 22,95 է:

$$6000 : 22,95 = 261,4375$$

Պատ. 261 0. Լ. 43 դր. 30 փարա է:

Գ.—Գնեցի թուականէս 11ամիսէն վճա-
րելի 250 անգլ. լիրայի Լոնտրայի թուղթ մը
գին 109,5էն. Անգլիոյ տոկոսի սակն է հա-
րիւրին շուկէս, քանի՞ 0. Լ. պիտի վճա-
րեմ,

$$250 \times 109,5 = 273,75 \text{ 0. Լ.}$$

273,75 լիրայէն զատ պիտի վճարենք նաև
ատոր երկու ամսուան տոկոսը, զի՝ 109,5ը

3 տմիս դամուկային գինն է. բայց մենք մէկ տմիսէն պիտի գանձենք, կամ որ նոյնն է 60 օր առաջ, ուրեմն տակտան ալ պարտինք արդ թագմարատկենք 273,75ը 60ով և 14400ով բաժնենք (2,5ին հաստատուն բաժանարարը)

$$\frac{273,75 \times 60}{14400} = 1,1489$$

Չոր կը գումարենք 273,75ին վրայ.

$$273,75 + 1,1489 = 274,8989$$

Պատ. 274 Օ. Լ. 89 չը. 35 փարս:

Ուրիշ անգամ գլխաւոր տէրութեանց դամուկային գիները կը ներկայենք մեր ընթեր-
ցողաց:

Պրոս սա

Տ. Պալ-ճեռ

Մ Ե Ք Ե Ն Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն

Թե ի նշան է և լեզուն վաղ և բերն արգանիւն

Պատասխան թիւ 53 հարցման

Վաղուղ ջուրի մը քանակը չափել ըսելով, կը հասկնանք թէ մէկ երկվարկեանի մէջ ի՞նչ ծաւալով ջուր կ'ապառի, կամ որ նոյնն է, մէկ երկվարկեանի մէջ քանի՞ վիթրա ջուր կը հոսի բերնէն:

Այս սպառումին քանակը կը տարբերի, ջուրի հոսանքին արագութեան, և բերնի ձեւին ու մակերեսութիւն համեմատ:

Թէ ջուրի մը հոսանքին արագութիւնը նոյնը չէ՝ իր խորութեան ամէն մէկ կէտին վրայ:

Ու է ջուրի հոսանքի մը մակերեսի արագութիւնը գտնելու համար հետեւեալ միջոցը կը գործածեն:

Ենթադրենք որ ջրմուղի մը ընթացքին մակերեսային արագութիւնը հասկնալ կ'ուզենք. առ այս՝ նախ ջրմուղին երկայնութեան վրայ որոշեալ տեղ մը ցից մը կը դա-
մեն, և այդ ցիցէն սկսեալ 100 մէթր դէպի վար ցից մը ևս կը տնկեն. այս գործողութե-

նէն յետոյ, առաջուց սլաքաւորութեամբ թեթեւ փայտէ, 3 հար. մէթր արամագծով բոլորակ-
ներ կ'առնեն, և առաջին ցիցէն մէկ քանի մէթր հեռու՝ ջուրին մէջ կը նետեն, նոյն միջոցին, երկվարկեան ցուցնող ժամացոյց մը ի ձեռին, այդ բոլորակներու ընթացքին կը հետեւին. երբ առաջին ցիցի ուղղութեան վը-
րայ դան, ժամացոյցի երկվարկեանի սլաքին եզած տեղը կը նշանակեն և կը հետեւին ու-
չադրութեամբ անոնց ընթացքին, մինչև որ երկրորդ ցիցի ուղղութեան հասնին. այն ա-
տեն բոլորակներու կարած ճամբուն երկայնու-
թիւնը, որ ըստ մեզ 100 մէթր է, կը բաժ-
նեն ժամանակի տեղութիւնով, որ հաշ-
ուած է երկվարկեանի վրայ, որու քանորդը կը ներկայացնէ, հոսանքին մակերեսային ա-
րագութեան մէկ երկվարկեանի մէջ քանի մէթր ըլլալը:

Զօր. օր. ենթադրենք որ 100 մէթր եր-
կայնութիւնը 25 երկվարկեանի մէջ անցած ըլլան, ըսել է հոսանքին մակերեսային արա-
գութիւնը մէկ երկվարկեանի համար հաւա-
սար պէտք է ըլլայ

$$U = \frac{100}{25} = 4 \text{ մէթր}$$

Այս կերպով սակայն, հոսանքին մակե-
րեսային արագութիւնը միայն կրնանք հաս-
կնալ: Երբ ուզենք իր միջին արագութիւնը գտնել(*), այն տալեն հոսանքին մէկ որոշեալ տեղը կը հաստատեն փոքրիկ ջրանիւ մը, ո-
րու թեւձակները կ'իջեցնեն ջուրին մէջ և կը թողուն որ դառնայ: Մէկ վայրկեանի մէջ ջրանիւի կատարած շրջանները կը բազմա-
պատկեն թեւձակներու ջուրին մէջ թաթ-
խուած մասին մէջտեղէն անցած շրջագիծու-
վը, արտադրեալը կը բաժնեն 60ով, որու քո-
նորդը հաւասար կ'ըլլայ տակաւին մակերե-
ւոյթի արագութեան, և այս քանորդը երբ

(*) Որովհետեւ, ինչպէս ըսինք, ջուրի մը ընթացքին խորութեան ամէն կէտին վրայ արագութիւնը միեւնոյնը չէ, մակերեսային որչափ շուտ կը հոսի, ընդհակառակը՝ որչափ յատակը խնայէ, այնչափ դանդաղօրէն կը յառաջանայ ջուրը, և յատակի շարժումը գրեթէ աննշմարելի է: Այս դանդաղութիւնը յառաջ կուգայ վերի խուրէն կրած ճնշ-
ւածքն և յատակի շփումէն:

հաշիւներով գտնուած և հաստատուած ջուրի հոսանքի արագութեան համաչափով բազմապատկենք, որ 0,75էն 0,90 կը տարբերի 0,10 հարմէթրէն մինչեւ 4 մէթր խորութեան համար. այն ատեն ջրանցքի հոսանքին միջին արագութիւնը գտած կ'ըլլանք: Բայց որովհետեւ այս գործողութիւնները երկար եւ դժուարին են գործնականի մէջ, ուստի ստորեւ դրած ենք ցուցակ մը, որու միջոցաւ անմիջապէս կրնաք գտնել ջուրի մը հոսանքի միջին արագութիւնը, երբ մեր նախապէս ցոյց տուած միջոցով, անգամ մը մակերեւոյթի արագութիւնը գտած ըլլաք:

ՑՈՒՅԱԿ

Ջուրի հոսանքներու միջին արագութեան

Արագութեան			
Միջին արագութիւն		Բարձր արագութիւն	
մ	մ	մ	մ
0,20	0,15	2,20	1,88
0,40	0,31	2,40	2,06
0,60	0,47	2,60	2,25
0,80	0,64	2,80	2,43
1,00	0,8	3,00	2,62
1,20	0,98	3,20	2,81
1,40	1,16	3,40	3,00
1,60	1,34	3,60	3,18
1,80	1,52	3,80	3,37
2,00	1,70	4,00	3,56

Շարք.

Ղ. ԲՈՂԱՏ

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՔ

Տնական գարման ինֆլուէնսայի դէմ

Հետեւեալները կը քաղենք առողջապահական թերթէ մը: Առէք վեց հատ խնձոր, առանց կեղեւեղու կոր կըսր կտրտեցէք. ամանի մը մէջ լեցուցէք և աւելցուցէք 2 լեմօնի հիւթ և 15 տրամ մեղր, բերանը զոցեցէք և մտըմալ կրակի վրայ դրէք. յետոյ մըլեցէք (սիւզմիւշ ընել) և տաք տաք տուէք հիւանդին:

ՓՈՂԱՑԱԻ ԴԱՐՄԱՆ

Երկցուկի (փափաթիւ) ջեռաթուրմ (էնֆիւզիօն Տեա. Հան. նախորդ թիւերուն մէջ) պատրաստեցէք, և խառնեցէք մէջը քիչ մը մեղր ու քիչ մ'ալ քաղախ. — ձեր պատրաստած ջեռաթուրմին համեմատ — ասով՝ օրը քանի մը անգամ՝ խաղաղեցէք (կտակառ ընել): Ընդհանրապէս այս դեղը կը բժշկէ թէ կոկորդի և թէ նշագեղձերու (սպտէմալ ճիւք) բորբոքումը, կ'ըսէ, վերոյիշեալ առողջապահական թերթը:

ԱՅՐԱՄԻ ԴԵՂ

Շատ մը փորձերով հաստատուած է որ, բեւեկին խկութիւնը (թիրէմէնթի բուհը) այրածի ցաւը վարկենապէս կ'առնէ, և ուրիշ ամեն տեսակ դարմաններէ աւելի շուտ կը բժշկէ:

Ստերջացած բամպակի (զոր. օր. քօդօն ֆէնիքէ. քօդօն պօռիքէ) կտոր մը թաթխեցէք (թրջելու աստիճան) բեւեկին խկութեան մէջ և այրած մատին վրայ դրէք, յետոյ լաթով մը փաթթեցէք որ բամպակը վրայէն չի սահի: Եթէ փշտածներ կան, պէտք է երկրորդ կամ աւելի աղէկ երրորդ օրը պատուել: Պէտք է զգուշանալ սակայն որ բեւեկին խկութիւնը միմիայն այրածին վրայ մնայ, ապա թէ ոչ առողջ մորթին վրայ մը նալով՝ բորբոքում յառաջ կը բերէ:

ԲԵԻԵԿՆԻ ԽԷԺԸ (ԹԻՐԷՄԷՆԹԻ) ԻԲՐ ՀԱԿԱՆԵՆԻՉ

Կիրարկումը պարզ է և ամեն ոք կրնայ փորձել:

Պնակի մը մէջ լեցուցէք դգալ մը բեւեկին խէժ, և դրէք մաղմաղ կրակի վրայ: Այսպէս կամաց կամաց շոգիանալով կ'սպաննէ մանրէները և օդը կը մաքրէ: Ասկէ աւելի դիւրին միջոց չի կայ կարծեմ բոլոր սեւեակները հակահեխելու համար: Սակայն գիտնալ պէտք է որ, ամենօրեայ օդի փոփոխութեան տեղը չի բռնէր: Ամեն ոք գիտէ այժմ որ, մեր բնակարանին՝ այսինքն, ննջեցեանակ, ճաշարան ևն. պատուհանները և դուռները օրը մէկ քանի անգամ բանալ գոցելու է ցուրտ օրերը. իսկ տաք ատենները բոլորովին բաց թողելու է:

ՄԱՋՐՈՒ ՀԱՄԱՐ

Հասարակ աղ	6 տրամ
Խնկունիի (պիպէռիէ) ջեռաթուրմ	
ուժով	62 »
Հնդիկիւղ (Հինա եաղը)	1 սկէս »
Հին ում	3 »
Դարիճենիկի խկութիւն (թառչին	
րուհու)	1—2 կթլ.

Խսկունիի ջեռաթուրմին մէջ հալեցուցէք աղը, և յետոյ միւս նիւթերը աղէկ մը խառնելով շիշի մը մէջ լեցուցէք ու բերանը ամրապէս գոցեցէք. և ամեն օր սանտրուած ատեննիդ մաղերնուդ քոցեցէք, որ թէ կը շատցնէ և թէ մաղերու արմատները կը պօրացնէ:

ԱՐԱՔՍ

ԽՈՂԱՆՈՅԻ ԲՍԺԻՆԸ

ԱՆՋՐՈՒԿԻ (անշուէկ) ԽՈՐՈՎԱՄ ԿԱՄ

ՉԱՍՏՈՒԱԾՆԵՐՈՒ ԿԵՐԱԿՈՒՐ

Հացի միջուկը շերտ առ շերտ եւ մաւի երկայնութեամբ կտրուեցէք. սակայն հաստութիւնը կէս հարմէթր ըլլալու է: Այդ կտորուանքը ձէթի մէջ խորովեցէք, եւ երբ բաց կարմիր գոյն մ'ստանան, պնակի մը մէջ շարեցէք, եւ պատրաստեցէք հետեւեալ թացանը: Քիչ մը ձէթ դրէք տապակի մը մէջ, նաեւ աղ սղպիւղ, ազատագեղ, էշալօդ և մանրուած քապար (քեպերէ որ կը ծախուի Ղալաթիոյ եւ Բերայի եւրոպական նպարաժաճառներուն քով): Երբ այս թացանը եռալ սկսի, կարմրեցած հացի կտորներուն վրայ լեցուցէք: Հիմա առէք անձրուկները, երկայնութեանը երկուքի բաժնեցէք, հանեցէք մէջի փուշերը, եւ իւրաքանչիւր հացի կտորին վրայ, կէս կէս շարեցէք, ու տաք տաք տաք հրաւնցէք: Փափկակերները ասոր «չաստուածներու կերակուր» կ'ըսեն:

ԻՏԱԼԱԿԱՆ ԿԱՆԿԱՌ (Էնկինար)

Կանկառները 4 կտորի բաժնեցէք, ստիկ-

ցէք եւ պաղ ջուրի մէջ նետելով լուացէք. յետոյ սանի մը մէջ լեցուցէք. աւելցուցէք վրան կարագ, քիչ մը ճերմակ գինի, և այնչափ ջուր որ ծածկուին կանկառները, լեմոնի մը հիւթը եւ պտուղնց մը աղ, եւ բերանը գոցելով բացարձարձ կրակի վրայ եփեցէք: Սփեղէն վերջ պնակներու մէջ շարեցէք եւ տաք տաք սեղան բերէք, եւ զատ պնակի մը մէջ ալ խաղաղան թացան (Տես Հանրդ. Նախորդ թիւերուն մէջ) դնելով միասին հրաւնցէք:

ՏԱՆՏԻԿԻՆԸ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ՉԵԿՈՅՑԸ

— ԳԵՂԵՐ —

Խնդրելով կը խնդրենք որ, հետեւեալ տեղերու բաժանորդ և դորձակալ, անոնք որ Հանրադիտակի Բ. Շրջանի ՊԱՐՏՔԵՐՆԻՆ չեն վճարած, բարեհաճին այն ազնուութեամբ վճարել, ինչ ազնուութեամբ որ վարուեցանք մենք իրենց հետ:

Հիմա՝ իրենց տեղոյն անունը միայն կը յիշենք փափկանկատութեամբ. հարկաւ անոնք որ պարտք ունին, գիտեն և կը հասկնան որ իրենց ուղղուած է: Եւ եթէ մեր այս վերջին հրաւերին ալ անկանջ չի կախն, պիտի պարտաւորինք այն ատեն, ակամայ, այդ չի վճարողներուն անունը հրատարակելով պահանջել իրենցմէ, մեր արդար իրաւունքը. միանդամայն պիտի հրատարակենք այն նամակները, որոնցմով թախանձագին թերթ խնդրած են մեզմէ՝ խոստանալով և վստահացնելով մէկ երկու շաբաթէն պարտքերնին վճարել. սակայն ցաւի ուրիշ կը յայտարարենք որ, ցարդ ու է վճարում չեն ըրած. և հետեւեալներն են.

Իզմիր. — Գարա-թաշ. — Պարտիզակ. — Սիվրիհիսար. — Ռոստոթօ — Մալկարա. — Սամսոն. — Տրապիզոն. — Սըվաղ. — Խարբերդ. — Ֆիլիպէ. — Գահիրէ. — Իսկիւպ:

Շար.

ԱՐՏՈՆԱՏԵՐ Ա. ԼՈՒՍԻՆԵԱՆ

ԹԵՐԹՈՆ «ՀԱՆՐԱԳԻՏԱԿ»

(6)

ՓԻՒՆԱՆ ԱԼԵԲՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

mmessunkaSenrA. icefdoK. segnittamurtn
ecertserrette, rotaivsadua, ednecsedsadne
lacartniiluYsiratracsarbmutabledmek
meretarcsilucosgleffenSnI

Երբ ընցուցի, կը խոստովանիմ որ յուզուած էի. այդ տառերը մէկիկ մէկիկ արտասանուած՝ ո՛ր է է խնայող չէին տար. ուստի սպասեցի որ Բրոքինսէօրը լատիններէն փառաւոր սրբերու թիւն մը թաւալէ վեհապաշտօնէն իր չրթունքներուն մէջէն:

Բայց ո՞վ կրնար գուշակել: Բռնեցքի ուժգին հարուած մը սեղանը դըլրեց: Մեշանը թափեցաւ ու գրիչը ձեռքէս վար ինկաւ:

«Աս չեղաւ, գոչեց մօրեղբայրս, խելքի դէմ է»:

Յետոյ գնտակի մը պէս աշխատութեան սենեակէն անցնելով, ձիւնակոյտի մը նման, սանդուխէն վար իջնելով, Քէօնիկ-Սթրասի փողոցներուն մէջ խոյս տուաւ արարչաւ:

Դ

—Մեկնեցա՞ւ, գոչեց Մարթա, փողոցի դրան հանած ձայնէն ներս վազելով, որովհետեւ դուրը ուժգնօրէն գոցուելով դըլրած էր ամբողջ տունը:

—Այո՛, պատասխանեցի, մեկնեցաւ:

—Է՛հ, հապա իր ճա՞ղը:

—Չպիտի ճաչէ:

—Ի՞ր տպուրը՞:

—Չպիտի ուտէ:

—Մարթա՛, ա՛յ տունին մէջ ոչ ոք պիտի ճաչէ: Մօրեղբայրս մեզ ամենքս ծովապահութեան ենթարկեց մինչև այն սառն, երբ հին խառնակ գիր մը յաջողի կարգաւ, որ բայարձակապէս անընթեռնելի է:

—Յիսուս-Մարիամ, ուրեմն անօթութեան պիտի մեռնի՞նք:

Համարձակութիւն չունեցայ խոստովանելու թէ մօրեղբորս պէս հաստատամիտ մարդ մը կարող էր այդ անխուսափելի վիճակին մատնել մեզ:

Պառաւ սպասուհին լրջօրէն յուզուած՝ խոհանոց դարձաւ մելտալով:

Երբ մինակ մնացի մտաբերեցի երթալ տալէն բան պատմել Կրիստինի. բայց ի՞նչպէս ձգէի տունը: Հապա մօրեղբայրս զիս կանչելու ըլլար, շարունակելու համար բառակրուսական աշխատութիւնը, որու մէջէն իգիւստ անգամ չը պիտի կրնար ելլել: Եւ եթէ զիս կանչած ատեն չի սկստասիրանէի, ի՞նչ պիտի պատահէր:

Ամենէն աւելի խելացութիւնը տունը մընալն էր: Եւ ճիշդ այդ օրերը Պրզանսօնցի հանքաբան մը կայծքարային հողաքարի (géode) * հաւաքածոյ մը զրկած էր մեզի, զոր դատակարգելու էր: Սկսայ պիտակել դանձր ու իրենց սեպհական ապակեդարանին մէջ զետեղել այդ խուռչաւոր քարերը, որոնց մէջ պզտիկ բիւրեղներ կը խլրտէին:

Այս գրադումն ալ չի մտատուեցայ զիս. հին վաւերագրին խնդիրը տարօրինակէս միաքս գրաւած էր: Գլուխս եռուզեռուսի մէջ՝ տարտամ մտաւտանջութիւն մը կ'իզայի: Կարծես մօտալուտ աղէտի մը նախազգացումն ունէի:

Ժամ մը ետքը հողաքարերը կարգով շարուած էին: Ութրէ խթի թաւիչէ թիկնաթուռին մէջ նետուեցայ, թեւերս ծալած ու գըլուխս վար կախած: Կոր եւ երկայն խողովակով ծխախողս վառեցի, որուն քանդակուած վարարանը՝ մեղիօրէն ընկողմանած դիցանուէ մը կը ներկայացնէր: Կը զուարճանայի դիտելով հետզհետէ աճող ածխած ումը, որ կատարեալ խափշիկահի մը կը փոխարկէր դիցանուէս: Մերթ ընդ մերթ ահանջ կը դնէի ոտնաձայն մը լսելու համար սանդուխին վրայ: Բայց ո՛չ. այս պահուն ո՞ւր կրնար ըլլալ մօրեղբայրս: Կ'երեւակայէի թէ Ալթօ:

(*) Սնամէջ քար մը ժանգի գոյնով, որու մէջ կը գտնուի հող կամ տւազ, որ ցնցած ատենդ այդ հողը կամ տւազը կը շարժին մէջէն:

նայի պողոտային գեղեցիկ ծառերուն տակէն կը վազէր, ոտքով ձեռքով շարժումներ ընելով, գաւազանը պատին գարնելով, բուն թափով մը խոտերը, ուղտափուշերը գլխատելով ու մենակեաց արագիւնները իրենց մենութեան մէջ վրդովելով:

Յաղթական թէ պարտուած տուն պիտի դառնար: Ո՞վ իրաւունք պիտի ունենար, գողտնի՞քը թէ ինք: Այս օրինակ հարցումներ ուղղելով մտքէն՝ մեքենարար ձեռքս առի այն թուղթը, ուր կ'երկարէր քիչ մը առաջուան գրած տառերուս անխմանալի շարքը: Ինքնիրենս կը կրկնէի.

«Ի՞նչ կը նշանակէ տու»

Կը ջանայի այդ գրերը այնպէս մը իրարու քով բերել, որ կարելի ըլլար այդ կերպով բառեր ձևացնել: Անկարելի եղաւ: Երկուքով, երեքով, հինգով, վեցով գրիւրը իրարու միացուցի, բայց բացարձակապէս անխմաստ բան մը արտադրեց. տառնըջորդորդ, տառնըհինգերորդ, տառնըվեցերորդ տառերը անգլիերէն «ice» (սառույց) բառը կը ձևացնէին, իսկ ութսունըջորդորդ, ութսունըհինգերորդ և ութսունըվեցերորդ գրերը անգլիերէն «sir» (տէր) բառը կը ձևացնէին, ու վերջապէս վաւերագրին երկրորդ և երրորդ տողին մէջ կային «rota», «mutabile», «ira», «nec» և «atra» լատիներէն բառերը:

Կրճղ, այս վերջին բառերը կը հաստատեն մօրեղբորս կարծիքը՝ վաւերագրին լեզուին վրայ: Եւ նոյն իսկ չորրորդ տողին մէջ կը նշմարուի «luco» բառը որ նուիրական փայտ կը թարգմանուի: Իրաւ է որ երրորդ տողին մէջ «tabiled» բառը կը կարգանք, որ կատարելապէս երբայերէն դարձուածք մը ունի, և վերջին տողին մէջ՝ «mer» (ծով), «arc» (աղեղ), «mere» (մայր) բառերը կը գտնուին որոնք զուտ ֆրանսերէն են:

Մարդ չուարած կը մնայ: Զո՞րս տարբեր գաւառաբարբառներ այս անհեթեթ սրարբերութեան մէջ: Ի՞նչ առնչութիւն կրնայ գըտնուիլ սա բառերուն մէջ. «սառույց, պարոն, բարկութիւն, անգութ, նուիրական փայտ, փոփոխական, մայր, աղեղ և ծով»: Առաջին և վերջին բառերը իրարու քով գալով խմաստ մը կուտային դիւրաւ. թէև բնաւ զարմա-

նալի չէ որ Իսլանտայի մէջ գրուած վաւերագրի մը մէջ «սառույցէ ծովի» խօսք մը գըտնուի: Բայց ծածկնագրին մնացած մասը այդ երկու բառերէն հետեցնել անկարելի էր:

Այս անլուծելի դժուարութեան մէջ կը տապալակէի ու գլուխս կը բարձրէր. աչքերս թուղթին վրայ կը քթթէին. հարկը երսուն երկու տառերը չուրջս կը թռչտէին, այն արծաթէ արցունքներուն պէս, որոնք մեր գըլխուն վերեւ օդին մէջ կը սառնի կարծես, երբ արիւնը ուժգնօրէն կը խուժէ մեր գլուխը:

Տեսակ մը զգայարարութեան մատնուած կը խեղդուէի. օդի պէտք ունէի: Մեքենարար սկսայ հովահարուիլ թուղթի մը կտորով, որուն աջ և ձախ երեսները աչքերուս առջևէն կը սահէին յաջորդաբար:

Ո՞րքան մեծ եղաւ զարմանքս, երբ այդ արագ շրջաններէ մէկուն մէջ, այն պահուն երբ թուղթին ձախ երեսը խփողմս կը դառնար, կատարելապէս ընթեռնելի բառեր կարծեցի տեսնել, լատիներէն բառեր. օրինակի համար craterem (խառնարան) և terrestre (երկրային) բառերը:

Յանկարծ լոյս մը ծագեցաւ մաքիս մէջ. այս միակ նշանները ճշմարտութիւնը ընդերձմարկ տուին ինծի. ծածկագրին օրէնքը գըտած էի. այս վաւերագիրը կարգաւ համար նոյն իսկ հարկ չկար այդ թուղթին մէկ կողմէն միւս կողմը կարդալ: Ո՞չ, ինչպէս որ մօրեղբայրս տուն տուած էր ինծի, այնպէս կարելի էր շատ դիւրաւ կարդալ: Բրօքսէնթօրին բոլոր հանձարեղ հնարքները կ'իրականանային. իրաւացի էին իր կարծիքները գրերու շարուածքին ու վաւերագրին լեզուին վրայ: «Ոչինչ» ի մը պէտք կար, որպէս զի մօրեղբայրս մէկ ծոյրէն միւսը կարենար կարդալ այս լատիներէն պարբերութիւնը, և այդ «ոչինչ» ը դիպումը ծանօթացուց ինծի:

Վերջապէս յաջողեցայ երեւակայութիւնս հանդարտեցնել: Եւ սկսայ երկու անգամ՝ սենեակին չըջանը ընել՝ ջիւերս ամաքելու համար: Յետոյ նորէն զայն թիկնաթուռին մէջ թաղուեցայ:

— Կարդանք, գոչեցի թոքերուս մէջ օդի առատ պաշար մը մթերելով:

Սեղանին վրայ ծռեցայ, մատոյ յաջորդաբար իւրաքանչիւր տառի վրայ դնելով, առանց կանգ առնելու և առանց բռնելի մը իսկ վարանելու, սկսայ բարձրաձայն արտաբերել ամբողջ պարբերութիւնը: (Շար.)

ԳԱՂ. ՀԱՅ. ԳՈՐԾՆ. ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՌԱՐԱՆ

Գործ՝ Հ. ՍԻՄԵՈՆ ԵՐԱՄԵԱՆԻ

Սոյն բառագիրքը կը խօսի աշխարհիկ լեզուով եւ գործնական ոճով Բժշկութեան, Վիրաբուժութեան, Առողջաբանութեան, Ճարտարաբանութեան, Բնաբանութեան, Քիմիայի, գեղերու. Բնական պատմութեանց, Աստղաբանութեան, Երկրագործութեան և այլ գիտութեանց վրայ:

Ըստ կարելւոյն ամենայն խնամք տարուած է բառերու ճշգրտութեան: Ընդարձակ բացատրութիւններ կուտայ իւրաքանչիւր նիւթի վրայ, ի բաց առեալ ամենէն անգործածական նիւթերն. իսկ կարեւոր նիւթոց վրայ չկերպով օգտակար տեղեկութիւնք անպակաս են: Այս աշխատութիւնը որպէս զի յինքնան կատարեալ ըլլայ, հեղինակը իրեն սուսընթերց բռնած է շատ մը հանրագիտական եւրոպական բառարաններ:

Գիտական բառերու մասին առաջնակարգ թիւերը եղած է այս գործիս Վ. Հ. Քաջունայ Հանրաքերական ընդարձակ ընտիր բառագիրքն, իսկ բուսոց մասին Վ. Հ. Ալիշանի Հայբանախ: Աւելորդ չէ համարուած գիտելու նաև մասնաճիւղերու վրայ խօսող գրքերու օգնութեան:

Հեղինակը խնամք եւրոպական ընտիր գործերէ քաղելով ամենէն գործնական և օգտակար գիտութիւններն զանոնք խմբագրած է մի հատորի մէջ՝ զարգարելով ամէն ճիւղի վերաբերեալ գեղեցիկ պատկերներով:

Սոյն գործը պիտի լրանայ 50 ութածայ թերթերու մէջ, իւրաքանչիւր թերթի երկայնութիւնն է 24 հարկերով ամբողջ, լայնք 16 հրմ. գրերն մանր և գիւրծնալի:

Իւրաքանչիւր թերթի բաժանորդագինն է 20 սանթիմ, ամբողջ գիրքն 10 ֆրանք (—4 ռուբլի, 2 տուար) զոր կանխիկ ներփակեալ տոմսակա պէտք է փափաքողն յղէ առ Տեսչութիւն Վինետիկի Միութեան Տպագրատան. ապահովագրեալ նամակաւ եթէ կուզէ ընդունիլ թերթերը:

Թերթերն կը զրկուին հինգ հինգ իւրաքանչիւր անգամ: Սուսատոմարի և Տաճկաստանի համար յայտնի է թէ լաւագոյն է յոնձնարարականու (recom mandé) յղել. առ այս փափաքողն պէտք է 25 սանդղիմ տուելի հաշուէ, որով բաժանորդագրոյն վրայ աւելցընէ ֆր. 2,50—(12,50 ֆր.—5 ռլ.—4ռ կես առլար, վասն զի կորստեան պատասխանատու չէ Տեսչութիւնը):

Տպագրութիւնը աւարտելէ վերջ, բառագրքին գինը պիտի բարձրանայ 15 ֆրանքի. բայց ի թղթատարի ծախուց:

* Վերագրեալ ազդի վրայ՝ Հանրագիտակի բոլոր Գործակալներու և Բաժանորդներու ուշադրութիւնը կը հրաւիրենք, և կը յանձնարարենք Վեր. Հ. Ս. Երամանի սոյն հմտալի և արգիւնաշատ գործը, որ ոչ միայն ֆրանսագետ հայերու, այլ մինչև իսկ ֆռանսերէն չգիտցող ամէն Հայ գրագէտի, բանասերի և ընթերցողի համար կարեւոր է, և անոնց չափ և աւելի կրնան օգտուել այդ բառարանի ուղղութիւնէն. քանի որ ամէն բառի առջև պիտի գտնան ընդարձակ բացատրութիւններ, լուսարանուած խնամատիպ պատկերներով:

Մ. Ս.

Լ. ԱՐՄԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՁԻ

Կ. ՊՈԼԻՍ, ՖԵՏԻԼԵԱՆ ԽԱՆԻ ՏԱԿ

Սոյն վաճառատուն պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ, ամեն տեսակ թարմ գեղորայք. վիրաբուժական գործիներ. Անգղիական և Գաղղ. պատրաստ գեղեր, գոնեակներ, գինիներ և հանքային ջուրերու մեծ մթերք մը յարմար գներով: Լ. Արսլանեան և Ս. Էմիրղէ Ընկերութիւնը երկարատեւ անձնական փորձառութիւններ ունին: Ամեն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացընելու համար, մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք դաւառաց համար, որոնց կը զրկեն գեղորայք, ամենայն արագութեամբ, թարմ և մատչելի գներով:

Շատեր այնպէս կը հաւատեն թէ Պոլսոյ հրապարակին վրայ ՃԵՄԱՐԻՏ և ԱՆԽԱՐԴԱՆ Մօռիւ ձկան իւղ չի գտնուիր. այս կարծիքը շատ սխալ է. պէտք ունեցողները թող գիտեն Լ. Արսլանեան և Ս. Էմիրղէ Տեարց Դեղորէից վաճառատունը, Ֆրենտզիւան Խանի տակ Թիւ 3, ուր պիտի գտնեն ուղղակի Նորվեկիայէն բերել արուած ամենաբնական ձկան իւղի տեսակներ: Մեծաքանակ եւ փոքրաքանակ վաճառումներ կ'ըլլան խիստ գիւրամատչելի գիններով:

ՇԵՐԱՄԻ ՍՄԵՆԱՐՆՏԻՐ ՀՈՒՆՏ

Որոնք որ կ'ուզեն շերամի ամենէն ընտիր հունաերը ունենալ, պէտք են դիմել Պրուսայի «Իրէք Խան» կոչուած մետաքսի վաճառատեղւոյն՝ հնտավաճառ Գրիգոր Փաւպուրճեանի, որ բառթէօրեան գրութեամբ՝ շերամի ամենաբնական հունաեր կը պատրաստէ և կը մատակարարէ իրեն գիմնջներուն, խիստ գոհացուցիչ գիններով:



**Կ. ԵՍՎՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ
ԹԵՅԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ**

Չինական, Հնդկական և Ճաբոնական
ամենաընտիր տեսակէ եղող արտագրու-
թիւնները պիտի գտնէք ապահովաբար
վերոյիշեալ պատուաւոր վաճառատան
մէջ անհամեմատ աժանութեամբ:

Գաւառներու համար, յանձնարարու-
թիւնները փութով և ճշդիւ կը կատա-
րուին:

Կեդրոնատեղին է, Կ. Պոլիս, ձէլալ
Պէյ խանի տակ, թիւ 10. սոյն վաճա-
ռատան ապրանքները ժողովուրդէն գը-
նահատուած ըլլալով, շատեր լ.հ.հ.
կեղծը հրապարակ հանած են.
զգուշանալու համար, վերոյիշեալ
ճառանիշին տակ Կ. Եսվրուեան և
Իսաղուլեան ստորագրութիւնը փնտռե-
ցէք:

ԵԹԷ ՈՏՔԻ ԿՈՇՏԵՐԷ

(ՆԱՍՈՐ) ԿԸ ՆԵՂՈՒԻՔ

Դիմեցէք առանց երկմտելու, Գուժ-
Գափու Ջարիֆեան դեղարանը, ուր պի-
տի ստանաք 5 դահեկանի փոխարէն,
փոքրիկ սրուակի մը մէջ, Ա. Ջարիֆ-
եան էֆ.ի հնարած «Հակակոշտային»
հեղուկը՝ բացատրութիւնով մէկտեղ:
Գաւառներէ ուղղորդուելու կը ղրկուի
թղթատարով:

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ-29րդ Տարի, Կիսամաթերթ,
ազգային, Գրական և Քաղաքական Խմբագիր-Տնօրէն
Մ. Մամուրեան: Տարեկան կանխիկ 80 դրշ կամ 17
ֆրանք, Ուսուցիչներու համար 60 դրշ կամ 13 ֆրե-
Հասցէ՝ Մ. Մամուրեան, Իզմիր:

ԲԱԶՄԱՎԷՊ—57րդ տարի, ամաթերթ, Հայ մատե-
նագրական, սոսեգաբանական, պատմական, քերական,
նական, աշխարհագրական, հնախօսական, և ընդ - Տա-
րեկան կանխիկ, 10 ֆրանք:

Հասցէ՝ Rédaction de la Revue "Bazmavep",
St. Lazare Venise (Itali)

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՈՐԵԱՅ — 13րդ տարի. ամաթերթ.
Հայ-գրական յօդուածներէն զատ ճշտիւ տեղեկութիւն
կուտայ Հայ. գրականութեան, Պատմութեան եւ ընդ
նկատմամբ, ամէն ամիս նոր հրատարակութեանց վը-
րայ եւ ընդ ընդ. Տարեկան կանխիկ 10 ֆրանք:

à la Rédaction de la Revue "Hantess",

VII^e2 Mechitharistengasse 4.
Vienne (Autriche)

ՀԱՅ ՇԱՔԱՐԱՎԱՃԱՌԸ

Եթէ կուզէք պատուական, համուլ
հոտով և աժան «Երգում շէքերի» ուտել,
դիմեցէք առ Սարգիս էֆ. Ալէմեան,
Էսկի-Ջապլիյէ, թիւ 57, ճիշդ Թուր-
քիա Օթէլի անկիւնը:

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Ի դիմաց ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ կ'ստորագրէ մի
միայն Տնօրէն-Խմբագրապետ Ղ. ԲՈՂԱՏ,
որով որ քանի որ է, առանց բացատրութեան,
թերթի վերաբերեալ ամէն գործառնու-
թեան համար:

در علیہ ده بفتحہ قوسندہ اسکی
۱۹ نومروی دکانده «مجموعه قوس»
سر محرری (بولاد) اقدی

Ղ. Բոլատ Տնօրէն-Խմբագրապետ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

19. Էսկի-Ջապլիյէ, Պաղչէ-Դափու
Սթամպոլ

H. Polad Rédacteur en chef du journal
"HANRAKIDAK",

19. Rue Eski-Zabtié Bahdjé-Kapou. 19
Stamboul